

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**№ 30/08**

**Քաղ. Երևան**

**04 նոյեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Յ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. նոյեմբերի 04-ի նիստում (արձանագրություն № 65/4) քննարկեց «Վ. Ռիզլի Ջր. Քամիընի, Դելավերի նահանգ» (US) ընկերության ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար, Է.Նահապետյանի կողմից ներկայացված 2008թ. հոկտեմբերի 10-ի բողոքը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն)՝ «Прохладная мята» բառային ապրանքային նշանի (հայտի №. 20071173) գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության 08.07.2008թ որոշման դեմ:

2008թ. հուլիսի 8-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում նաև՝ օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ տեքստում նաև՝ կարգ) 12-րդ կետի 3-րդ ենթակետի, 90-րդ կետի 5-րդ ենթակետի և 90-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը մերժել է՝ քանի որ «Прохладная мята» արտահայտությունը իրենից ներկայացնում է համընդհանուր գործածում գտած ապրանքի տեսակային անվանում՝ այն է «Прохладная мята» արտահայտությունը թարգմանաբար նշանակում է «սառը (սառեցնող իմաստով) անանուխ» և բնորոշում է ապրանքի որոշակի հատկություն, հետևաբար դրա օգտագործման բացառիկ իրավունքը չի կարելի ընձեռել որևէ անձի, նկատի ունենալով, որ առևտրային գործունեության ընթացքում բոլոր անձիք օրինաչափ ձևով կարող են օգտագործել այն:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են՝

Բողոքողը բողոքում նշել է, որ հայտարկվող «Прохладная мята» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «զով անանուխ», ապրանքի հատկություն նշելու նպատակ չի հետապնդում նախ և առաջ այն պատճառով, որ հանդիսանում է յուրօրինակ կազմություն ունեցող մի բառակապակցություն, որը հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Տվյալ բառակապակցության բաղկացուցիչ մասը կազմող «Прохладная» (հով, զով, սառը) ածականը, որը հանդես է գալիս որպես մակդիր «мята» (անանուխ) գոյականի համար, չի կարող համընդհանուր գործածում գտած ապրանքի տեսակային անվանում հանդիսանալ, քանի որ «զով,սառը» բառերը ուղղակիորեն կարելի է օգտագործել միայն եղանակը, քամին կամ ջուրը բնութագրելիս, սակայն ոչ որևէ բույս նկարագրելիս: Ուստի տվյալ արտահայտությունն իր կազմությամբ օժտված է մի այնպիսի յուրահատուկ առանձնահատկությամբ, որտեղ «Прохладная» և «мята» բառերը, լրացնելով միմյանց սպառողի

երևակայության մեջ արթնացնում են տվյալ բույսի փոխաբերական իմաստով հանդես եկող հատկությունները, և ոչ հայտարկվող ապրանքի: Նման արտահայտություններից են օրինակ՝ «пьяная вишня, праздничный персик, любопытный лимон»: Սակայն դրանք ուղղակիորեն չեն բնորոշում տվյալ մրգի հատկությունը, այլ արտահայտում են դրա հատկությունները մարդու պատկերացմամբ: Նման մակդիր էլ ծագել է հայտարկվող նշանը ստեղծող մասնագետի մոտ, որի պատկերացմամբ անանուխը բնորոշող մակդիր կարող է լինել, օրինակ՝ «Прохладная» «զով, հով» բառը: Շնորհիվ այդ յուրօրինակ համակցության նշանը ստանում է տարբերակիչ հատկություն և առանձնանում նմանատիպ նշանների շարքից: Սակայն անանուխը «мята mint» ներկայացվում է նաև բազմաթիվ այլ մակդիրներով, օրինակ՝ fresco mint (IR505536)՝ որմնանկարային անանուխ, air mint (IR810109)՝ օդային, թեթև անանուխ, brilliant mint (IR812397)՝ ադամանդե անանուխ, exciting mint (IR694409)՝ ոգևորիչ անանուխ, coolmint (IR869052)՝ զով անանուխ և բազմաթիվ այլ արտահայտություններ, որոնք գրանցված են նաև որպես ապրանքային նշաններ, ընդ որում վերջինս հայտարկվող արտահայտության անգլերեն տարբերակն է, որը գրանցված է O3 դասի ապրանքների նկատմամբ և տարբերակիչ հատկությունից զուրկ չի դիտվել: Բոլոր վերը նշված արտահայտություններում «անանուխ» բառը հանդես է գալիս բազմապիսի մակդիրներով, որոնք կարող է թույլ տալ մարդկային երևակայությունը:

Բողոքողը նշել է նաև, որ վերոհիշյալ հայտատուի անվամբ գրանցված են իրենց կազմում mint (мята) բառը ներառող բազմաթիվ այլ նշաններ: դրանցից են՝ SPEARMINT (սրատերև անանուխ), DOUBLEMINT (կրկնակի անանուխ), WINTERMINT (ձմեռային անանուխ), ARROWMINT (աղեղային անանուխ) բառային և համակցված նշանները, որտեղ կրկին բացահայտվում են «mint» (անանուխ) բառի նոր, յուրօրինակ հատկությունները: Ուստի «Прохладная мята» նշանն էլ, որպես մի ինքնատիպ արտահայտություն կարող է գրանցվել ՀՀ տարածքում վերոնշյալ նշանների հետ մեկտեղ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, բողոքողը խնդրել է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել թիվ 20071173 հայտով «Прохладная мята» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված դասի բոլոր ապրանքների նկատմամբ:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ ելության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը պարզեց հետևյալը՝ այն որ հայտատուի կողմից նշված ատամի մածուկների վրա գրված է «COOL MINT» դա դեռ չի նշանակում, որ սահմանափակված է դրանով, բացի դրանից գոյություն ունեն նաև այլ բառեր և բառային արտահայտություններ և այլ դիզայն, որոնք ապահովում են տվյալ նշանի կամ տվյալ մածուկի համար կիրառվող նշանի տարբերակիչ հատկությունը: Ինչ վերաբերում է բերված ապրանքային նշաններին՝ SPEARMINT, DOUBLEMINT, WINTERMINT, ARROWMINT, ապա այս ապրանքային նշանները գրված են մի բառով: Ընդ որում որպես մոտեցում կիրառման ենթակա է հետևյալը՝ բոլոր այն բառային արտահայտությունները, որոնք միջին սպառողի համար ակնհայտորեն բնորոշում են որևիցե ապրանքի որոշակի հատկություն, հատկանիշ, որակ, քանակ և այլն, բնականաբար ենթակա են մերժման, բոլոր այն բառային արտահայտությունները, որոնք միջին սպառողի համար այդ նպատակին չեն ծառայում կարող են գրանցվել: Հետևաբար այս չորս թվարկված ապրանքային նշանները, որոնք մի բառով գրանցված են կարող են գոյատևել Հայաստանի սպառողի համար, քանի

որդրանք ընկալվում են ոչ թե որպես երկու իմաստային բառերի մեխանիկական միացություն, այլ որպես մեկ իմաստազուրկ բառ: Ինչ վերաբերում է «Прохладная мята» արտահայտությանը, ապա Չայաստանի միջին սպառողի համար նշված արտահայտության իմաստը ռուսերենից հասկանալի է: Բացի դրանից, դա կապ ունի ոչ թե «մյատա»-ի հետ, այլ դա կապ ունի տվյալ ապրանքին որոշակի հատկանիշ բնորոշելու հետ, այսինքն այն բնորոշում է, որ այդ ապրանքը ունի անանուխի համ և ինքը սառեցնող է, այսինքն այն տվյալ ապրանքի որոշակի հատկություն է բնորոշում: Դա է պատճառը, որ «COOL MINT» արտահայտությունը բազմաթիվ ապրանքների համար օգտագործված է, օրինակ՝ մաշկի, մարմնի խնամքի և սափրվելու քսուկներ, օճառներ, մազերի խնամքի նյութեր, ատամի մածուկ և ծամոն, այսինքն այն բնորոշում է որոշակի հատկանիշ: Հետևաբար օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի համաձայն «Прохладная мята» բառային ապրանքային նշանի (հայտի No. 20071173) գրանցումը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից բողոքարկման խորհուրդը գտնում է, որ կրկնական փորձաքննությունը կատարվել է օրենքի և կարգի պահանջներին համապատասխան և «Прохладная мята» բառային ապրանքային նշանի (հայտի No. 20071173) գրանցումը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքերի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի, կարգի 12-րդ կետի 3-րդ ենթակետով, 90-րդ կետի 15-րդ ենթակետով, «Չայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «բ» ենթակետով բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Վ.մ. Ռիգլի Ջր. Քամիընի, Դելավերի նահանգ» (US) ընկերության ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար, Է.Նահապետյանի կողմից ներկայացված 2008թ. հոկտեմբերի 10-ի բողոքը և «Прохладная мята» բառային ապրանքային նշանի (հայտի No. 20071173) գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության 08.07.2008թ որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի  
Նախագահ

Ա.Ազիզյան